ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՄՈԲԱՅԼ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԸ, ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՆՈՐԱՐԱԿԱՆ ՄՈԴԵԼ»
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ «ԱՍՏՂԱՑՈՒՔ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՊՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋԵՎ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ, ՆՈՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կոտայք, ք. Բյուրեղավան . << 01>> հունիսի 2018 թ.

Կայուն զարգացման նախաձեռնությունների «Աստղացոլք» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ «Աստղացոլք» ՀԿ-ն), ի դեմս նախագահ՝ Իրինա Հովհաննիսյանի և ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան խոշորացված համայնքի (այսուհետ՝ Համայնք), ի դեմս համայնքի ղեկավար՝ Հակոբ Բալասյանի, այսուհետ՝ «Կողմեր»,

հաշվի առնելով, որ «Աստղացոլք» ՀԿ-ին հնարավորություն է ընձեռնվել իրականացնելու **«ՄՈԲԱՅԼ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԸ, ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՆՈՐԱՐԱԿԱՆ ՄՈԴԵԼ»** Ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), որը նպատակ ունի նպաստել Հայաստանի գյուղական համայնքներում նախադպրոցական կրթության խնդրի լուծմանը, նորարական Մոբայլ մանկապարտեզների համակարգի ներդրման միջոցով,

ընդունելով **Ծրագրի** համակարգված աշխատանքների անցկացման անհրաժեշտությունը՝ **Կողմերը** իրենց կազմակերպությունների կանոնադրություններին և կանոնակարգերին համապատասխան, պայմանավորվում են համագործակցել հետևյալի մասին.

Հոդված 1. Նպատակ

Սույն Փոխըմբռնման հուշագիրը նպատակ է հետապնդում վերոնշյալ Ծրագրում ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան խոշորացված համայնքի թվով 2 (երկու) գյուղական բնակավայրերում (Նուռնուս և Ջրաբեր) փորձարկել Մոբայլ մանկապարտեզների նորարական համակարգը, նպաստելով նախադպրոցական կրթության զարգացմանը:

Հոդված 2.

Կողմերը պայմանավորվում են սույն Փոխըմբռնման հուշագրով, իրենց կազմակերպությունների ներքին կանոնակարգերին համապատասխան, իրականացնել համագործակցություն նախադպրոցական կրթության զարգացման, նորարական համակարգերի ներդրման բնագավառում:

Հոդված 3.

Կողմերը սույն Փոխըմբռնման հուշագրով նախատեսվող համագործակցությունը իրականացնելու համար համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

«Աստղացոլք» ՀԿ-ը պայմանավորվում է հետևյալի մասին.

1. Իրագործել «Մոբայլ մանկապարտեզները, որպես Հայաստանի գյուղական համայնքներում նախադպրոցական կրթության խնդրի լուծման նորարարական մոդել» ծրագիրը Համայնքում, նպաստելով շահառու համայնքներում նախադպրոցական կրթությունից դուրս մնացած երեխաների թվի կրճատմանը:

2. Համայնքի կողմից Մոբայլ մանկապարտեզի աշխատանքի կազմակերպման համար տրամադրված տարածքում իրականացնել հետևյալ նյութական ներդրումները՝

   - տրամադրել մինչև 500 եվրո գումարի սահմաններում շինանյութ՝ ՄՄ աշխատասենյակի վերանորոգման համար,
   - տրամադրել առնվազն 15 երեխաների ուսուցումը կազմակերպելու համար անհրաժեշտ կահույք՝ պահարան, սեղաններ, աթոռներ, գորգ,
   - ապահովել մանկապարտեզը զարգացնող խաղերով և խաղալիքներով,
   - ապահովել անհրաժեշտ գրենական պիտույքներով և պարագաներով:

3. Կազմել և յուրաքանչյուր մանկապարտեզին տրամադրել Մոբայլ մանկապարտեզի անձնագիրը (ՀՀ Կրթության ազգային ինստիտուտի փորձագետի ներգրավմամբ), որի մեջ մանրամասն ներկայացված կլինի Մոբայլ մանկապարտեզի հայեցակարգը, մոբայլ թիմի օպտիմալ կազմը, յուրաքանչյուրի պարտականությունները, աշխատանքային ժամերի քանակը և հաճախականությունը և այլ տեխնիկական մանրամասներ:

4. Կազմակերպել դասընթացներ Համայնքի թեկնածու-մասնագետների (մանկավարժ/սոցիալական աշխատող/հոգեբան) վերապատրաստելու համար, որից հետո կատարել հիմնական մոբայլ աշխատանքային թիմի ընտրությունը:

5. Պարբերաբար տեղեկացնել Համայնքին իրականացված աշխատանքների մասին :

6. Ծրագրի շրջանակներում ցանկացած փոփոխության կամ խնդրի ծագման վերաբերյալ տեղյակ պահել Համայնքի ղեկավարին:

ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան խոշորացված համայնքը պայմանավորվում է հետևյալի մասին.

1. Ծրագիրն իրականացնող շահագրգիռ կողմերի հետ հաստատել սերտ համագործակցություն ծրագրային աշխատանքներն իր նպատակային ավարտին հասցնելու համար:

2□ Անհատույց օգտագործման իրավունքով հատկացնել նվազագույնը 30-40ք.մ. մակերեսով մեկ աշխատասենյակ գյուղապետարանի կամ համայնքի ենթակայության այլ գործող շենքում՝ Մանկապարտեզի գործունեության համար, ինչպես նաև կազմակերպել սենյակի վերանորոգման աշխատանքները, օգտագործելով Աստղացոլքե ՀԿ տրամադրված շինանյութը և ապահովելով հավելյալ շինանյութը, եթե սենյակի վերանորոգման աշխատանքների համար պահանջվում է ավելին, քան ներ է դնում ՀԿ-ն:

3. Աջակցել գյուղական բնակավայրերի 3-5 տարեկան երեխաներ ունեցող ծնողների հետ համայնքային հանդիպումների կազմակերպմանը՝ Մոբայլ մանկապարտեզների համակարգի ներկայացման և մանկապարտեզ հաճախող երեխաների նախնական գրանցման նպատակով:

4. Վերահսկել ու պահպանել <<Աստղացոլք>> ՀԿ-ի կողմից Ծրագրի շրջանակներում Համայնքի համապատասխան աշխատասենյակին տրամադրված նյութական ռեսուրսները՝ գույքը, զարգացնող խաղերը և գրքերը:

5. Մոբայլ մանկապարտոզների աշխատանքների կազմակերպման նպատակով, համայնքի ենթակայության որևէ մանկապարտեզում, կամ ՏԻՄ համար նախընտրելի այլ ձևաչափով, ապահովել մոբայլ մանկապարտեզների 1-3 աշխատողների աշխատանքի ընդունումը, հատկացնելով բյուջե՝ մոբայլ թիմի աշխատավարձի ապահովման, ճանապարհածախսի կազմակերպման, ծախսվող նյութերի գնման համար: ՏԻՄ մարմինը կարող է պատվիրակել նախադպրոցական ուսուցման ծառայությունը որևէ քաղաքացիալակն հասարակության կամ մասնավոր կառույցի, եթե տվյալ կառույցն ունի համապատասխան աշխատանքների իրականացման կոմպետենտություն և իրավական հիմքեր:

6. Հոգալ Մոբայլ մանկապարտեզների անհրաժեշտ նվազագույն ադմինիստրատիվ ծախսերը (էլեկտրաէներգիա և ջրի վարձավճար):

7. Մոբայլ մանկապարտեզների աշխատանքի համար հատկացված տարածքները առնվազն 10 տարիների ընթացքում չօտարել և օգտագործել ըստ սույն հուշագրի նպատակի:

8. ՏԻՄ մարմինը պարտավորվում է 3-րդ անձանց անհատույց չտրամադրել, չվաճառել, չնվիրաբերել, ինչպես նաև այլ նպատակներով չօգտագործել մոբայլ մանկապարտեզների գույքը:

Հոդված 4. Ուժի մեջ մտնելը, ժամկետները և դադարեցումը

4.1. Սույն Փոխըմբռնման հուշագիրն ուժի մեջ կմտնի կողմերի ստորագրման պահից և կգործի մինչև 2019թ. հոկտեմբերի 1-ը, որից հետո կիրականացվի ծրագրի գնահատում:

4.2. Սույն Փոխըմբռնման հուշագրի գործողությունը դադարում է ժամկետը լրանալու պահից, մինչև հաջորդ հուշագրի կնքումը:

Հոդված 5. Փոփոխություններ

Սույն Փոխըմբռնման հուշագիրը կարող է փոփոխվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և կձևակերպվեն գրավոր՝ նշելով այդ փոփոխությունների ուժի մեջ մտնելու ժամկետները:

Հոդված 6. Վեճերի լուծման կարգը

6.1. Սույն Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում Կողմերի միջև վեճի ծագման դեպքում այն ենթակա է կարգավորման Կողմերի միջև անմիջական բանակցությունների միջոցով:

6.2. Կողմերի միջև վեճը չկարգավորվելու դեպքում, այն ենթակա է լուծման Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 7. Ընդհանուր դրույթներ

6.1. Առաջարկվող համագործակցությունը կոչված է նպաստելու «Ծրագրի» գործունեության ոլորտում փոխըմբռնման և համաձայնության գաղափարների, աճող սերնդի բազմակողմանի զարգացմանը:

6.2. Կողմերի պատրաստակամությունը համընկնում է «Ծրագրի» նախագծին և գործողությունները մանրամասնող պլանին:

6.3. Սույն հուշագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 /երկու/ օրինակից՝ հայերեն լեզվով, յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

8. Փոխըմբռնման հուշագիրը ստորագրող կողմերի վավերապայմանները՝

Կազմակերպության անվանումը՝ Կայուն զարգացման նախաձեռնությունների «Աստղացոլք» ՀԿ Հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ, Գետափնյա փ., 37 շենք Նախագահ՝ Իրինա Հովհաննիսյան ՀԿ ՀՎՀՀ՝ 08612377 Բանկի անվանումը՝ Արդշինբանկ ՓԲԸ Բանկային հշ՝ 072 247720351201000 0 ---------- (ստորագրություն) Կ.Տ	Համայնքի անվանումը՝ ՀՀ Կոտայքի մարզ Բյուրեղավան համայնք Հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ, ք. Բյուրեղավան, Վազգեն Ա Վեհափառի փողոց, թիվ 1 վարչական շենք Համայնքի ղեկավար՝ Հակոբ Բալասյան Համայնքի ՀՎՀՀ՝ 03546187 Բանկի անվանումը՝ ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն Բանկային հշ՝ 900102311025 ---------- (ստորագրություն) Կ.Տ